ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ 66

ք. Երևան «06» «04» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի, և **«Հայաստանի ազգային կինոկենտրոն»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրենի պաշտոնակատար՝ Շ. Միրզախանյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վճարի դիմաց Պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել Պայմանագրի 2.3-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված ազգային կինոծրագրերի իրականացում և այլ գործառույթներ (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ազգային կինոծրագրերի իրականացման կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ հավելված N 2,

1.1.3. կինոարվեստի ոլորտում ՊՈԱԿ-ի հիմնական կատարողական ցուցանիշներ (ՀԿՑ)՝ հավելված N 3,

1.1.4. ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվության՝ հավելված N 4:

1.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարումը կատարվում է դրամաշնորհի հատկացման ձևով՝ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1056. Կինեմատոգրաֆիայի ծրագրի» «11003. Ազգային կինոծրագրերի իրականացում» միջոցառման համար նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում:

1. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. 1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ Կատարողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները և հաշվետվությունները:

2.1.2. Իր և Կատարողի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում Կատարողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու

2.3.8. Մարտ-ապրիլ ամիսներին իրականացնել կինոցուցադրություններ և միջոցառումներ Ֆրանկոֆոնիայի երկամյակի շրջանակներում:

2.3.9.Իրականացնել կինոցուցադրություններ և միջոցառումներ՝ նվիրված Համո Բեկնազարյանի 130, Ռուբեն Մամուլյանի 125, Յուրի Երզնկյանի 100, Ֆրունզե Դովլաթյանի 95 և Ալբերտ Մկրտչյանի 85 ամյակներին:

2.3.10. Իրականացնել կինոժառանգության ֆիլմերի պահպանում, թվայնացում և տարածում (այդ թվում՝ հեռուստաեթերով և համացանցով):

2.3.11. Մինչև կինոժառանգության հրապարակային ցուցադրումը և միջոցառումների իրականացումը .Պատվիրատուի հետ համաձայնեցնել գովազդային նյութերը (ազդագիր, հեռուստառադիոգովազդ և այլն):

2.3.12. Ապահովել Հ.Մալյանի անվան դերասանի թատրոն-ստուդիայի ներկայացումների իրականացումը:

2.3.13. Յուրաքանչյուր կիսամյակ Պատվիրատուին ներկայացնել ցուցանիշներ՝ համաձայն Հավելված N 3-ի:

2.3.14. Իր գործունեության հանրահռչակման նպատակով ընթացիկ տարում պարբերաբար ապահովել տեղեկատվական նյութերի լուսաբանում՝ կազմակերպության պաշտոնական կայքէջում, մշակութային լրահոսում և սոցիալական հարթակներում (մասնավորապես՝ Facebook, Instagram):

2.3.15. Իրականացնել միջազգային կինոկազմակերպությունների հետ համատեղ կինոնախագծեր՝ մասնակից կինոարտադրողների պարտավորությունները երաշխավորող պայմանագրերի առկայության դեպքում:

2.3.16. Պատվիրատուին ներկայացնել առաջարկություններ՝ օտարերկրյա պետություններում հայկական կինոյի օրերին, շաբաթներին, միջազգային կինոփառատոներին, կինոշուկաներին մասնակցելու վերաբերյալ:

2.3.17. Ներկայացնել տեղեկատվություն ֆիլմերի արտադրության յուրաքանչյուր փուլի և ավարտի վերաբերյալ՝ համապատասխան փաստաթղթերով և եզրակացությամբ:

2.3.18. Ընդունել Պատվիրատուի և այլ ընկերությունների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում արտադրված կինոնկարները (խաղարկային, մուլտիպլիկացիոն լիամետրաժ, կարճամետրաժ, դեբյուտային) և դրանց վերաբերյալ Պատվիրատուին ներկայացնել եզրակացություն:

2.3.19. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.20. Հրապարակել պատվիրատուի անունը (ֆիլմերի մակագրերում, ազդագրերում, գովազդատեղեկատվական բոլոր նյութերում, հարցազրույցներում և այլն), իսկ համաֆինանսավորման դեպքում Պատվիրատուի պահանջով տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.21. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և Կատարողի կանոնադրությամբ սահմանված դեպքերի):

2.2.2. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկույթ սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2.3. Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Կատարողի կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները:

2.2.4. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.5. Վերաիսկել սույն պայմանագրով Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2.6. Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1.Ապահովել կազմակերպության գործունեությունը կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան:

2.3.2. Ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքները, դրանց հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իրավական այլ ակտերի համաձայն:

2.3.3. Ստեղծել կինոարվեստի բնագավառում երկրի համար հասարակական, քաղաքական, մշակութային ու գեղարվեստական կարևորություն ունեցող, ազգային գաղափարախոսությունն ու արդիական խնդիրներ արտահայտող խաղարկային, մուլտիպլիկացիոն լիամետրաժ, կարճամետրաժ, դեբյուտային կինոնկարներ՝ նախապատվությունը տալով գաղափարագեղարվեստական բարձրարժեք հայտերին:

2.3.4. Ստեղծել մանուկների և պատանիների նախասիրություններին, հետաքրքրություններին, քաղաքացիական գիտակցությանը, հայրենասիրության ձևավորմանը նպաստող խաղարկային, մուլտիպլիկացիոն կինոնկարներ:

2.3.5. Երիտասարդ կինոգործիչների ստեղծագործական ներուժի խթանման նպատակով, աջակցել նրանց մասնագիտական ունակությունների կատարելագործմանը՝ մասնավորապես աջակցելով դեբյուտային կինոնախագծերի իրականացմանը:

2.3.6. Մինչև ֆիլմերի հրապարակային ցուցադրումը ապահովել դրանց փակ դիտումը Պատվիրատուի ներկայացուցիչների մասնակցությամբ:

2.3.7. Ապահովել (առնվազն 3 միջոցառում) ՀՀ մարզերի, մասնավորաբար՝ սահմանամերձ համայնքի բնակիչների, արցախահայության, երկրորդ արցախյան պատերազմից տուժած, հաշմանդամություն ունեցող զինծառայողների, զոհված զինվորների ընտանիքների, քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց լիարժեք ընդգրկվածությունը Հայաստանի մշակութային կյանքում, (ինչպես ստեղծագործական պրոցեսի անմիջական մասնակցի, այնպես էլ հանդիսատեսի կարգավիճակով): Ներառական ծրագրերի իրականացման ընթացքում սերտորեն համագործակցել առողջապահության ոլորտի համապատասխան մասնագիտական կառույցների հետ:

2.3.22. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել Պատվիրատուի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան:

2.3.23. Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար:

2.3.24. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունը (ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կատարողի մոտ): Կատարողը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար: Բովանդակային հաշվետվության հետ ներկայացնել իրականացված միջոցառումների մասին համապատասխան նյութեր (լուսանկարներ, լոգոտիպ կամ այլ գրաֆիկական պատկեր, հոլովակներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով:

2.3.25. Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:

2.3.26. Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները:

2.3.27. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել Կատարողի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես՝ մինչև փաստացի ծախսերի կատարումը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2022 թվականի դեկտեմբերի 20-ը: Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2022 թ. դեկտեմբերի 24-ը:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները:

2.4.2. Պատվիրատուից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ՝ Պատվիրատուի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները:

2.4.3. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդհանուր արժեքը սահմանված է մինչև 155293.9 (մեկ հարյուր հիսունհինգ միլիոն երկու հարյուր ինսուներեք հազար ինը հարյուր) հազար դրամ՝ ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը Պատվիրատուն պետք է Կատարողին վճարի սույն պայմանագրի 2-րդ հավելվածով սահմանված ժամկետներում, Կատարողի՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կատարողի կողմից աշխատանքների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:

4.2. Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ

նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանվելու դեպքում վերջինս, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տույժ Պայմանագրի տվյալ ժամանակահատվածի համար սահմանված գնի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կատարողը, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարված աշխատանքի 0.5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է Պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

8.2. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի երկկողմ գրավոր համաձայնություն կազմելու միջոցով:

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.5. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում կամ սահմանափակվում:

8.6. Սույն պայմանագիրը կազմված է 13 թերթից (ներառյալ հավելվածները), կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Վազգեն Սարգսյան 3	Երևան, Տերյան 3ա
Կառավարական տուն 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271
Հ/Հ 900011032597 ՀՎՀՀ 02698732	Տնօրենի պաշտոնակատար՝
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	
Վ. Գասպարյան	Շ. Միրզախանյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«03» 02 2022
N ՄՇԴ66 պայմանագրի

Ազգային կինոծրագրերի իրականացման կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշներ	Միավոր	Քանակ
1.	Խաղարկային կինոնկարների և մուլտիպլիկացիոն կինոնկարների արտադրության ապահովում (ֆիլմերի քանակը), որից՝		6
1.1	Խաղարկային կինոնկարներ	հատ	3
1.2	Մուլտիպլիկացիոն կինոնկարներ	հատ	3
2.	Վերականգնվելիք (պատճենահանվելիք) և թվայնացվող ֆիլմեր	հատ	2
3.	կինոարտադրության ոլորտում ստեղծագործողների և արտադրողների ընդհանուր թվից իգական սեռի մասնաբաժինը	տոկոս	50
4.	Միջոցառումների կազմակերպում (հոբելյանական, ֆրանկոֆոնիային նվիրված, քրեակատարողական հիմնարկներում, ՀՀ մարզերում, խոցելի խմբերի համար), քանակ		8
5.	Կինոժառանգության ֆիլմերի տարածում հեռուստաեթերով, քանակ		400
6.	Հենրիկ Մալյանի անվան կինոդերասանի թատրոն		
6.1	Հանդիսատեսի թվաքանակ	մարդ	3300
6.2	Ներկայացումների քանակ	հատ	50
6.3	Ստացիոնար մեկ ներկայացման համար դահլիճի միջին բեռնվածություն	տոկոս	55
6.4	Մեկ ներկայացման հաճախելիության նորմատիվ	մարդ	68
6.5	Տոմսի միջին գին	դրամ	1490.9
7.	Եկամուտներ, այդ թվում՝	հազար դրամ	184593,9
7.1	Կինոֆիլմերի ցուցադրությունից (ՀՀ տարածքում և ՌԴ)	հազար դրամ	24380.0
7.2	Հ. Մալյանի անվան թատրոնի տոմսերի վաճառքից	հազար դրամ	4920.0
7.3	Տրամադրվող դրամաշնորհի գումարը	հազար դրամ	**155293.9**
8.	Ծախսեր		184593,9

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032597 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

Վ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն»
ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝

Շ. Միրզախանյան

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

«02» «02» 2022 թ. N ՄՇԴ-66 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ **«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ**

1056	11003	**Ազգային կինոծրագրերի իրականացում**

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների /աճողական/												
		I եռամսյակ			II կիսամյակ			9 ամիս			տարի			ԸՆԴԱՄԵՆԸ
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին	4637	0.0	15057.8	30115.6	43041.0	55966.5	68891.9	80922.0	92952.0	104982.1	121752.7	138523.3	155293.9	155293.9
Ընդամենը		**0.0**	**15057.8**	**30115.6**	**43041.0**	**55966.5**	**68891.9**	**80922.0**	**92952.0**	**104982.1**	**121752.7**	**138523.3**	**155293.9**	**155293.9**

Պատվիրատու՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
Երևան, Կառավարական տուն N 2, Վազգեն Սարգսյան 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032597, ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները
կատարող՝

Կ.Տ.

Վ. Գասպարյան

Կատարող՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝

Կ.Տ.

Շ. Միրզախանյան

Հավելված N 3
«03» «03» 2022 թ.
N ՄՇԴ 66 պայմանագրի

Կինոարվեստի ոլորտում «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի հիմնական կատարողական ցուցանիշներ (ՀԿՑ)

- Կազմակերպության հետ համագործակցող միջազգային կազմակերպությունների քանակ
- Կազմակերպության հետ համագործակցող կինոարտադրող ընկերությունների և դեբյուտային նախագծերի քանակ
- Միջազգային փառատոներից կամ մասնագիտական հարթակներից ստացած հրավերների և մասնակցության քանակ
- Միջազգային փառատոներին կամ մասնագիտական հարթակներին հայկական կինոնախագծերի, ֆիլմերի և կինոգործիչների մասնակցության քանակ
- Կինոարտադրողների հետ մեթոդական և խորհրդատվական հանդիպումների քանակ
- ՊՈԱԿ-ի գործունեության հանրայնացման ընթացքում լրատվամիջոցների ներգրավվածություն (զուտ տեղեկատվություն և վերլուծական նյութեր, այդ թվում՝ օտարերկրյա ԶԼՄ-ներում)
- SMM (Social Media Marketing) ցուցիչներ
- Հովանավորների ներգրավվածություն, հովանավորի հանրային վարկանիշի բարձրացմանն ուղղված միջոցառումներ
- Գովազդատեղեկատվական արշավ. հանրային լայն ճանաչում ունեցող մարդկանց ընդգրկվածություն, կազմակերպության հանրային ճանաչելիության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ
- Հայկական կինոարտադրանքի (այդ թվում՝ կինոժառանգության, ժամանակակից ֆիլմերի) դիտումների քանակ
- Այցելուների շրջանում իրականացված հարցումներ և դրական արձագանքների քանակ
- Վաճառված տոմսերի քանակ (անկախ հովանավորչական միջոցներով կազմակերպված միջոցառումներից)
- Կրկնվող այցելությունների տոկոս («հավատարիմ հանդիսատես»)

- Ծառայության մատուցման եղանակով իրականացված այլ միջոցառումների քանակ և համապատասխանությունը կազմակերպության կանոնադրական նպատակներին
- Հրավիրյալ ստեղծագործողների և մասնագետների (հայ և օտարազգի) քանակ կազմակերպության բովանդակային գործունեության մեջ
- Ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների ներգրավվածություն՝ միջոցառումներում, կինոարտադրական խմբերում (այդ թվում՝ կանանց ընդգրկվածության տոկոս)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032597 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
Վ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն»
ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271

Տնօրենի պաշտոնակատար՝
Շ. Միրզախանյան

Կ.Տ.

Հավելված N 4
«03» «03» 2022 թ.
N ՄՇԴ 66 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքա-կանության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարագրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխատեսումը հաշվետու ժամանակահատվածի համար	Ցուցանիշի փոփոխություններն ըստ համապատասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակահատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակահատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերությունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբերության պարզաբանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032571 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
Կ. Գասպարյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Հայաստանի ազգային կինոկենտրոն» սպորտի ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744 ՀՎՀՀ 01203271
Տնօրենի պաշտոնակատար՝
Շ. Միրզախանյան

Կ.Տ.